ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-հոկտեմբեր)









Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 114.5%, 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.4%, իսկ 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 92.9%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 2 տրլ 128 մլրդ 547,1 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 280 մլրդ 357,3 մլն և 500 մլրդ. 746,9 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 360 մլրդ 763,6 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 54 մլրդ 412,2 մլն. և 89 մլրդ 680,9 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 3 տրիլիոն 423 մլրդ 827,4 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 743 մլրդ 738,2 մլն և 1 տրիլիոն 146 մլրդ 925.7 մլն դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 2 տրիլիոն 74 մլրդ 313.6 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 548 մլրդ 758.1 մլն և 660 մլրդ 582.7 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 109.9%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.1%-ի և 100.5%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 114.4%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.1%-ի և 86.7%-ի պարագայում:

ԱԺԲԳ









Առևտրի շրջանառության իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 115.5%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.0%-ի և 87.5%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 127.9%, 2021 և 2020 թթ., ինչպես նաև 2020 և 2019 թթ. համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.4%-ի և 87.2%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 437 մլրդ 760 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ նվազել է 53.2 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 110.7 մրդ դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 1 տրիլիոն 400 մլրդ 806.3 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 285.5 և 326.7 մլրդ դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 267 մլրդ 182.7 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 44.6 և 58.5 մլրդ դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվար-հոկտեմբերին կազմել է 22 մլրդ 798.1 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 3 մլրդ 431.7 մլն և 4 մլրդ 827.2 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 94.9%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.6%-ի և 114.9%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 118.1%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.2%-ի և 97.1%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարի-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 102.6%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.5%-ի և 100.4%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 107.4%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.6%-ի և 84.7%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 204 մլրդ 605.2 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 11.7 մլրդ դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 96.2 մլրդ դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 362 մլրդ 662.3 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 100.3 և 125,7 մլրդ դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 635 մլրդ 721.1 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 245.3 և 248.4 մլրդ դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 105.7%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 64.7%-ի և 88.2%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերինկատմամբ կազմել է 138.3%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.5%-ի և 107.2%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվար-հոկտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 149%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 102.5%-ի և 108%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2022թ. հունվար-սեպտեմբերին 2021թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ կազմել է 108.7%, 2021թ. հունվար-հոկտեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.9%, 2020թ. հունվար-հոկտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.9%: ՍԳԻ-ն 2022թ. հոկտեմբերին 2021թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 106.0%, 2021թ. հոկտեմբերին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 104.2%, 2020թ. հոկտեմբերին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 99%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2022թ. հոկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 112 մլրդ 191 մլն դրամ, ինչը 45.8 մլրդ դրամով կամ 4%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 267.1 մլրդ դրամով կամ 31.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2022թ. հոկտեմբերի դրությամբ կազմել է 74036 մարդ, ինչը 134779 մարդով կամ 15.7%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 14320 մարդով կամ 16.2%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2022թ. հոկտեմբերի դրությամբ կազմել է 50730 մարդ, ինչը 8328 մարդով կամ 14.1%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 9686 մարդով կամ 16%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդի/հավելուրդի ֆինասավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 10 մլրդ 885.2 մլն դոլար, ինչը 4 մլրդ 342.1 մլն դոլարով կամ 66.4%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 5 մլրդ 132 մլն դոլարով կամ 89.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է -2,626.3 մլն դոլար, ինչը 906.3 մլն դոլարով կամ 52.7%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 996 մլն դոլարով կամ 61.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 4 մլրդ 129.4 մլն դոլար, ինչը 1 մլրդ 717.9 մլն դոլարով կամ 71.2%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2 մլրդ 67.9 մլն դոլարով կամ 100.3%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 6 մլրդ 755.8 մլն դոլար, ինչը 2 մլրդ 624.3 մլն դոլարով կամ 63.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3 մլրդ 64.1 մլն դոլարով կամ 83%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2022թ. հունվար-հոկտեմբերին կազմել է 226621 դրամ, ինչը 27761 դրամով կամ 14%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 40197 դրամով կամ 21.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2022թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 12 մլրդ 956 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 167 մլրդ 444.2 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -154 մլրդ 488.2 մլն դրամ: 2021թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 202 մլրդ 18.1 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -23 մլրդ 675.6 մլն և 225 մլրդ 693.7 մլն դրամ: 2020թ. հունվար-հոկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 205 մլրդ 896.3 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 228 մլրդ 142 մլն և -22 մլրդ 245.7 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ